

Ջերմ շնորհաւորութիւններ ան փառաւոր յաջողութեան առթիւ, որ Բոլորական Սօցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնը ունեցել է նորեքս օրէնսդրական ընտրութիւններում:

Իր կորովի դիրքով, գեղեցիկ տոկունութեամբ Բոլորական Պրօլետարիատը ցոյց տուեց մի անգամ ևս, որ նա ուժգնապէս փարձել է մարդկային արդարութեան և ազգերի խղարկութեան վսեմ էդէալին: Մի անգամ ևս Բոլորական գիտակից Պրօլետարիատը ապացուցեց, որ յօվինիստական հասանքները անկարող են խեղդել նրա մէջ իր պատմական միասնալի քաղաքական-Սոցիալական կատարեալ ազատագրութիւնը:

Միջազգային բանուորութեան սկզբունքներին հաւատարիմ, մենք դատաւարեցինք-հէնց սկզբից-Բալկանեան Սօցիալ-Դեմոկրատ կուսակցութիւնների մի ընդհանուր Մանիֆէստով՝ Խաչակրաց արշաւանքը ընդդէմ «Գիստուսին»-ի, Հակառակ մեր ցանկութեան պատերազմը պայթեց: Մեզ մնում էր միայն համակերպուել Բազէլի Միջազգային Կոնգրէսի Մանիֆէստին, որ ասում էր. «Կոնգրէսը վստահ է, որ Բալկանների Սօցիալ-Դեմոկրատիան ամեն ջանք գործ կդնէ, պատերազմից լետու, արգիլելու, որ այնքան սոսկալի անհնազանդութեանց գնով ձեռք բերուած հետեանքները չհաջողորձուին և չյառակացուին Դինաստիաների, Միլիտարիզմի, Բալկանեան մի բուրժուազիայի անլազ ձգտումներին՝ դէպի աշխարհակալական ընդարձակում»:

Հպարտ ենք, ուրեմն, ասելու, քաղաքացիներ, որ Բոլորական Սօց. Դեմոկրատիային է պատկանում պատիւը՝ առաջինը ձեռնարկելու այն անսահման ջանքը, այդ պրօգրամը իրադրծելու խնդրում:

Բոլորական Պրօլետարիատի բողոքութիւնը այնպիսիներից է, որ պիտի ունենայ իր ցնցումները ամբողջ Բալկանում և որի արձագանքը ուրախացում է Միջազգային Սօցիալ-Դեմոկրատիայի և նա մանաւանդ Հայկական Պրօլետարիատի սիրտը:

Ձերմապէս բարեմաղթում ենք, որ Բոլորական Սօցիալիզմի շարժման այդ փառաւոր ու առաջադէմ մարշը շարունակուի աւելի ուժգին թափով՝ իրադրծելու Բալկանների Դեմոկրատիկ Դաշնակցութիւնը:

Կեցցէ՛ք Բոլորական Սօցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւնը:

Կեցցէ՛ք Միջազգային Սօցիալիզմը:

Ի դիմաց Սօցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական վարչութեան՝

Քարտուղար՝ Բ. Վարազդաս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի՞նչ ԶԵՐՈՍԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԹԻՒԻ (Վերդիգոնում)

Հայը և իր թերթերն ընդհանրապէս և մեր տուգները կամ բազարի դատաստանը:

Կովկասեան մամուլում ցաւակցական յօդուածներ լոյս տեսան, որ ոսկիների հպարտ ու հօգը քաղաքը, Բագու, իր բերաւոր հայերով մի հայ օրաթերթ պահել չի կարողանում և հազիւ հազար շէնք գալիս այնտեղ մի «Բագուի Զայն»:

Դրեցին, որ հայաշատ Երևան ևս «Կը-

ռան», ապա «Նոր-Մամուլ» և այլ օրգաններ, հին թէ նոր, չպահեց: Այլ քան դրա պօլը իր մի քանի կարծօրեալ թերթերը ըստանց: Շուշում մեռաւ «Հորիզոնակերպ» «Վարազդ» շունենայովանգամիտարուայ կեանք, հակառակ իւր շառաշուն մեծածխօտութեան: Մի քանի համարներից լետու մեռաւ և «Ջաւախքը» Ախալցխայում, Բոլոր իշխալ քաղաքները հայկական, առաւել կամ պակաս չափով, խոշոր կենտրոններ են, առ նուազն 30-40,000 հայութեամբ, իրենց կրեոսներով, համարաւանականներով... Արդ, եթէ բազմահազար և բերաւոր հայութեամբ լեցուն կենտրոնները, անգամ մի տարի, թերթ չեն պահում, միջէ գարմանալի է, որ 700 տուն Թաւրիզը չպահէ մի թերթ: Մենք կրկնում ենք, հայ թերթի պահել չպահելը ընտ. պայմանաւորուած չէ նրա համակրութեան հետ: Թիֆլիզում դադարեցին Սօց. Դեմոկրատական «Կայծ», «Հոսանք», թերթերը, ապա և «Արշալոյս»-ը, երբ դեռ ետուն էր ժողովրդական ոգին: Պահում են այն թերթերը առաւելապէս, որ կուսակցական են: Եւ եթէ մենք լիակաւում ենք Յորդ տարին այս մի բուռն ժողովուրդի մէջ, որ գերակշռող են դեռ չկամները, դա միայն (պ. Ենգի և ընկ.) ցոյց է տալիս մեր անընկճելի կորովը, այն և համակրութիւնը: Բայց մենք դառնալով մեր իշխած հայաշատ կենտրոններին:

Այդ կենտրոնները չպահեցին մեր հայ թերթերը ոչ թէ նրա համար, որ դրանք համակրութիւն չէին վայելում (ականջը խօսի գրական ճամարտակ, լարտապաս և «Միտք» փէշերը լար խաճնող են գրի), ոչ, այլ որ հայը չի սիրում վնասել իր մայրենի թերթերին: Հայը սպանում է իր ուսուցիչ և ճշմարտութիւն քորով թերթերը: Ահա, հայ դժբաղդ թերթերի վիճակը ընդհանրապէս: Նայել դուրս թիւն է և այստեղ՝ Թաւրիզում:

Մենք, ինչպէս ասել ենք, ի հարկէ չենք խօսում, մեր, այսպէս ասած, «հակաուկրդներ» մասին, այլ նրանց, որ այս ու այն կողմին չեն պատկանում, որ զգում են թէ խղարխօրէն խօսող մի զօրեղ «Միտք» պէտք է մեզ այստեղ, բայց և այնպէս չեն ուզում վճարել մի 20 դոտ, որպիսի մի գումար, հազիւ 140 հոգի տալիս է մեզ Թաւրիզում, այն էլ վնաս այն տալուն:

Դեռ այդ հերթը չէ, մեզ դատում են խտազոյնաւ: Եւ, տարաբաղդաբար, մեզանում դատում և վատարանում են անմեղները, իսկ պատասխանատուները՝ քննուում են: Մի բարեկամ մեզ գրած իր մի յօդուածով ասում է, որ մի քանի տուգներ բազարում անբարեհաճ էին վերաբերում դէպի «Միտք»: Ի հարկէ նրանց անբարեհաճութիւնը ոչ գարմանալի է և ոչ աննեղելի: Նախ, որ մենք անմեղի համար համակցելի լինել չենք կարող և, երկրորդ, չէ որ ոմանց համար լոկ մեր անձը մի գառն դեղ է նրանց քմբում: Ոմանց համար մեր թերթը մի աչքի փուշ: Այլոց համար մեր դիմաց-կանոթիւնը դիւահարեցնող մի հանգամանք, իսկ որոշ դասի համար մեր խօսքը մի խարազան, որ մարտկում է կեղծիքը, բռնութիւնը, տապալում կուսերը, պահանջում գործ ու արդարութիւն: Ահա այս է, որի հետ չի հաշուում նաև բազարի դատաստանը կամ տուգների մտածելակերպը, որ ցանկանում է այստեղ ևս խօսքի այն տուր տիրէ, ինչ իշխում է այժմ Շուշում, Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Երևանում... Բագուում... Միջինը Թաւրիզը, իրօք՝ հպարտ պէտք է լինէր

իր «Միտք»-ով և շտապէր օգնել նորան, որ դառնար առաւել զօրեղ, առաւել բովանդակալից և ընդ միշտ լարտուն: 700 տուն Թաւրիզիցներից միայն 300 տուն, կամ 300 հոգի բաժանորդ՝ հէնց կարող էր ապահովել «Միտք»ը: Իսկ աննշան պակասը կրտսուէր գաւառների բաժնեգներով: Տուգերը կամ վաճառականները, եթէ լաւ ըմբռնեն, դեռ գոհ պէտք է լինին մեզնից: Թէ կուգ մեր № 17 առաջնորդի համար, որով նրանց սպանացող վտանգն էինք մատնանշել: Բայց մենք այնպիսի դարում ենք ապրում, որ մարդկանց լաւն էլ ի՞նքն ասէք, աչքից էք ընկնում և ձեզ տեսնելն ուխտում: Դուք պէտք է ալան-թալան, մէջքի կուսում, համակերպութիւն և կեղծիք քորոգէք, որ ձեզ սիրեն: Եւ որովհետեւ մենք հակառակ ենք քորոգում, մեզ չեն սիրում, ուստի և խափանուած են ուզում անսել «Միտք»ը՝ բազարի մեզ դատողները, և խօսքով միայն «դեմակրատները», որոնք դեռ ինքնիշխան օրէնքով՝ պահում են իրենց աթոռներն ու ալլապերիչ ազդեցութիւնը մեր անլեզու ժողովրդի վրայ:

Մեզ Թերթ ՊէՏԲ Զէ՛ն:

Այս մօտիկ օրերում ես դժբաղդութիւն ունեցայ խօսքի բռնուելու մի կարգ անհատների հետ «Միտք»-ի մասին, և ցաւելով պիտի լայտնեմ խօսակցութեան ճնշող արդիւնքը:

Խօսակցութեան արդիւնքը կարճ ու ամփոփ ասած՝ այս է... «Մեզ թերթ պէտք է»:

— Ի՞նչու, օգտից բացի ի՞նչ կարծաւարար վնասներ է տեսնում — հարցիս նրանք ոչինչ պատասխանել չկարողացան, լեզուները ծածմեցին և ուսները թոթվեցին: Հոգեբանութիւնից հասկացողին պարզ էր, որ նրանց չկամութեան միակ ու վերջին պատճառը լոկ վճարել չուզելն է. ապա թէ ոչ, ինչպէս կողմնակի լսել եմ, նրանք էլ, ուրիշներն էլ ուրախ ու համակիր են «Միտք»-ի համարձակ ու անվերապահ գրուածներին:

Մեր կարծիքով, մեր ազգային դժբաղդութիւններից մէկը, թերևս և ոչ երկրորդականը այն է, որ մենք ծախսում ենք անկարելի և փուշ բաների վրայ լիառատ կերպով, իսկ կենսական և օգտակար բաների վրայ չենք ուզում կոպ. անգամ ծախսել: Ահա թէ ի՞նչը պիտի բուժել մեզանում և ի՞նչ վիրաւոր կէտի վրայ է շարունակ մատնանշում «Միտք»ը, որին մենք սննդել, գուրգուրալ չենք ուզում՝ գերադասելով խաւարը, ագիտութիւնը, կեղծիքը և կապուտ կողովուտը:

Ինչպէս քանիցս կարգացել, նոյնպէս մօտիկ էլ մենք ծանօթ ենք, որ, իրօք, մեր թերթի խմբագիրն ու տնօրէնը ընտելեք չեն տպում իրենց հրատարակած թերթի փողով և դեռ մի բան էլ իրենցից են վրայ տալիս: Արդ, մեզ մնում է «նիսի» կարգաւորը ձեռք վերցնել, բարեացակամօրէն վերաբերուել դէպի գործը, առանց սակայն անհատները գործի հետ շփութելու: Սիրենք լոյսն ու թերթը և ապահովենք այդ մեր դրամներով, որ այնքան առատօրէն ծախում ենք օրգանների և մինչև լոյս աւելող լիբը գուարճութեանց վրայ, առանց մի աննշան բան էլ տալու մեր մտաւոր սննդի և հոգու աղնութեան համար:

Վահէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԸ

Թէ որքան հաստատ, հիմնաւոր և ճշգրիտ, սակայն ախուր իրականութեան վրայ է անդրադառնում պատուական «Միտք»-ի 20 համարում լոյս տեսած «Խորեկամի» շահուէտ յօդուածը ի մասին հայ վաճառականութեան ցաւելի և հօկական նախանձի, փաստօրէն ապացուցանում է այն, ինչ որ պատահեց հէնց այս օրերում մեր խաչկաբարի հրապարակում: Մի քանի լայտնի խոշոր ֆիրմաներ ցանկանալով վնասել մանր առեւտրով ըզբաղւող բոլոր վաճառականներին, որոշեցին սաքի արժէքները զգալօրէն գրգռել որպէսզի նրանցից ոչ ոք չհամարձակուի մօտենալ այդ գործին, բացի այդ, անխիղճ պարսնները կարգադրում են բոլորովին մի հատ սաքա չգնել հրապարակում և միւս կողմէ կատուած գներով ծախել ձեռներում ունեցած ապրանքները, այնպէս որ սարսափը տիրել էր պահ մի բոլորին: Սակայն մի քանի այլ մեծ ֆիրմաներ տեղեկանալով նրանց այս անխիղճ և կործանիչ մանէօվրին, ախալում են և սկսում են մեծաքանակ ապրանքներ հրապարակում և դրանից քաջաբարձ՝ մանր գործ անողներն էլ սկսում են ապրանք գնել ընկած արժէքներով: Ցանկարժ Խաւսական շուկաներում սաքի արժէքները սկսում են արագօրէն բարձրանալ և մինչդեռ մանէօվրիները մեծ կորուստ են կրում ալլապերիսով, միւսները բոլորը շահուէտ գործ են անում: Որչափ իրաւացի է ժողովրդական առածը «Ուրիշի համար հօր փոքրը ինքը մէջն է ընկնում»:

Արցաւ

ԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԼ ՀՈԳՈՅՍ

Թերթեր, թերթիկներ յուսով առ լցուն Կեյման, կը մեռնեն հոգոյս մէջ խելառ, Հոգոյս մէջ, սըրտիս՝ ուր ցաւն է անհուն, Ուր պաշտած սէրերս կը մեռնեն անփառ:

Սէրեր, գգո՛ւ անքներ մահամեծ գող գող, չիւծող կըծքիս տակ դառն յոյզեր փղկին: Յոյզեր, վարդ-յուշեր, ժպտներ շող շող, չալեր, թաղուեր են անժանօթ Սըրտին:

Ի՞նչ բոյր համբոյրներ շըրթներէս անյուշ Վառեր, ցընդեր են: Կըրէհն է մարեր Պարապ հոգոյս մէջ ու սէրեր մեղուշ: Շուրջս բերկընթիւն ալ բնաւ չեմ տեսներ:

Հեւանդ, մահամեծ աչքերովս հըրայր, Հայացք մը անեղ հոգոյս եմ նետեր, Ու կը սարսափեմ՝ հոգիս է խաւար... Աշխարհն անհրապօք, աշխարհն ինձ աւեր:

Ա. Ժէոս

Դաւրէժ

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐԸ

Ուրմի. — Ա. Միլլապոսեան
Մարադա. — Մ. Խան Սֆիթանդիան
Արդարի. — Յովհ. Մհ. Պետրոսեան
Էնգելի. — Մ. Մկրտչեան
Խաղա. — Դուր. Յարութիւնեան
Աստուա. — Մ. Նիկողոսեան
Սովաշլուրալ. — Պ. Տէր Յովհաննիսեան
Ղազվին. — Արգ. Տէր Յակոբեան
Սպահան. — Ներսէս Դալթեան
Ջուլֆա (Պարսկ.) — Ն. Ալեքսանեան
Օշական (Թուր.) — Միսակ Օհանեան
Պոլիս — Խմբագրութիւններ «Կայծ» և «Կա. հակ»
Փրօվիդէնս (Սմերիկա) — Խմբ. «Սմերիկա»
Սարգ. Հայաստան
Բաղդադ. — Մ. Ն. Իսկէնդերեան

զաքացին հաշիւ է պահանջում Արամ-եան դպրոցի 60-ամեայ Յօրքեանական Յանձնախմբից և հոգաբարձութիւնից Յօրքեանի առթիւ հանգանակած դրամներէ համար:

Պ. Քաղաքացու պահանջն իրաւացի գտնելով, շտապում ենք յայտնել, որ հոգաբարձութիւնն ցարդ չի ստացել յօրքեանական յանձնախմբից ոչ դրամ և ոչ էլ հաշիւ, այդ առթիւ հոգաբարձութիւնն իր № 22 գրութեամբ դիմել է յօրքեանական յանձնախմբի նախագահ, վաճառականապետ պ. Զաքարիա Նազարբէկեանին և խնդրել, որ հաճի կարգադրել, ինչ որ պէտք է: Պարզն Նազարբէկեանը խոստացաւ պէտք եղածը տնօրինել, սակայն քաղաքիցս բացակայելու պատճառով հնարաւոր չէր ելել հաշիւներէ յանձնախմբէն: Վերադարձից յետոյ կրկին անգամ լիշեցրել ենք և խնդրել փութացնել հաշիւներէ յանձնումը: Վստահենք, որ շուտով կ'անձնեն դրամներն ու հաշիւները և յօրքեանական յանձնախմբը կ'ամ հոգաբարձութիւնն մամուլի միջոցով հաշիւը կ'ներկայացնէ հասարակութեան ի գիտութիւն և ի միաժողովի նուիրատուներին:

Յօրքեանի առթիւ հոգաբարձութիւնը ստացել է շնորհակալութեամբ նաև հաւեալ նուիրատուութիւնները անկախ յօրքեանական յանձնախմբից: Մի քանի մետաքսի վրայ-օր. Սրբուհի Տէր Յարութիւնեանից, նոյնից սկիզբով շրջանակում օր. Սրբուհի Յովսէփեանից, մի մետաքս բարձի երկու մետաքսակար՝ օր. Թադևոսի Գրիգորեանից: Տիկիններ Զարուհի Ա. Ֆիթանգիլեանի, Լիգա Տէր-Վարդանեանի, Հեղինէ Գառնարեանի և օրիորդներ Արուսեակ Մել. Ազարեանի, Հեղինէ և Նեկապար Ֆիթանգիլեաններ և Նեկապար Պատմագրեանի, Մարիամ Ներսիսեանի, Սրբուհի Տէր Օհանեանի և Վարդանուշ Մել. Վարդանեանի նախաձեռնութեամբ տրուած ներկայացման արդիւնքից՝ 3 դիւմին աթոռ և 224 դոն կանխիկ դրամ: Տիկիններ Մարիամ Նազարբէկեանի և Արաքսիա Վարդանեանի նախաձեռնութեամբ տրուած թուրքեղէն (3861,40 կ. և 223 ռուբլի 45 կ. Ռուսական) և Հայերէն (643 զ. 25ո.) ներկայացումներից մնացած գուտ արդիւնքը-ըստ ցուցակի, այդ ներկայացումների արդիւնքը լատկացուած է նոր օրհան շինութեան-համաձայն տիկինների ցանկութեան:

Կրկին շնորհակալութիւն յայտնելով յարգելի Տիկիններին և օրիորդներին, պարտք ենք համարում յայտնելու որ հոգաբարձութիւնն որոշել է առաջիկայ զարնան նոր թատրոն կառուցանել, բայց որովհետև այդ նպատակին լատկացուած գումարը չաւ քիչ է, գործը գլուխ բերելու համար սրանով զբաղւում ենք նախաձեռնող տիկիններ Պարսն Նազարբէկեանին և Արաքսիա Վարդանեանին և խնդրում օր քանի ինչն իրենց սկսած գեղեցիկ և բարենպաստ ձեռնարկը մինչև վերջը աւելնել հաջողակութեան կամ ալ իրենց գիտցած լարմար միջոցներով լրացնել նոր թատրոնի կառուցման համար պէտք եղած գումարը, որը միայն պատիւ կարող է թելել յարգելի տիկիններին:

Թերթիմացութեանց տեղիք չտալու համար, պարտք ենք համարում յայտնել, որ յարգելի տիկինները այդ ներկայացումների արդիւնքը լատկացրել էին կօրիգօրի շինութեան: Հոգաբարձութիւնն ի նկատի ունենալով, որ միայն կօրիգօրի համար ահագին փող պիտի ծախուի և թատրոնը պիտի մնայ նոյն խղճուկ բեմն ու սրահը լարմար համարեց նոր թատրոն

կառուցանել, իսկ ներկայ սրահը դարձնել կօրիգօր: Կարծում ենք, որ յարգելի տիկինները ոչինչ դէմ չեն ունենալ մեր այդ որոշման և վստահ ենք, որ չեն մերժիլ մեր խնդրը և նոր թատրոնի կառուցման համար պէտք եղած գումարի պակասը լրացնելը իրենց վրայ կ'ընդունեն:

Նախագահ՝ Բժ. Վահան Գեորգեան
Քարտուղար՝ Ս. Տէր-Կարապետեան

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Շնորհաւոր նոր տարի և բարի կազանդ... Կլսեալ ամենի բերանից նոր տարու օրը:

Ինչ ծիծաղելի և անմիտ խօսքեր... Ինչպէս թէ շնորհաւոր նոր տարի և... ո՛ւմ էք ուզում խաբել: Միթէ անխորհրդի տարին կարելի է շնորհաւորել: Աղքատի ինչը պիտի շնորհաւորես քո դատարկ խօսքերով: Եթէ ես հարուստ և ունեւոր եմ, դու ի՞նչու ես ներութիւն քաշում և իմ նոր տարին շնորհաւորում որովհետև ինձ համար միշտ նոր տարի է և կամ երբ ուզեմ՝ այն ժամանակ է նոր տարի է իսկ դու, խեղճ ողորմելի, որ գրկաւսումը մկներ են խաղում, ինչ շնորհաւորանք և ինչ նոր տարի կարող է քեզ համար լինել:

Ստույն են որ տօները ծով մարդկանց հնարածն են. կարծես մասամբ ճիշտ է, այնպէս չէ: Ուրեմն Աստուած ծուլութեան հիմքն է դրել՝ ապահովելով եօթներորդ օրը իբր հանգստութեան օր: Բայց հեռու գնացինք. մեր ինչ գործըն է, ո՞վ է տօներ սահմանել. բայց փաստը նա է, որ աղքատը չի տօնում ոչ մի տօն...:

Սրբ, այդպէս լինելով հանդերձ, մենք ևս չենք շեղուիլ ընդհանուր ընդունած սովորութիւններից և օրէնքներից և կը շնորհաւորենք բոլորի տարին զանազան պարգևներով և բարեմօղութիւններով, սկսած ամենայեան աղքատից մինչև մեծատուներ, տարին տասներկու ամիս կտորն ընկած վարժապետից մինչև հարուստ պրօֆեսօրը, գալլաքից սկսած մինչև գոթօրը, տիրացուից սկսած մինչև բարձր հոգևորականը, հասարակ գործակատարից մինչև կուշտ կառավարիչը, փողոցներ չափող ինժեներներից մինչև իսկական ինժեները, սե ու սպիտակ որոշող և իրանց պրօֆեսօր համարող դպրոցաւարտներից մինչև համեստ գիտունը և այլն և այլն, ալ և շնորհաւորում ենք եկեղեցում բարեպաշտ ձեռնդրողներին և դուրսը մարդկանց տունը քանդողներին մտքով ուրիշ բան մտածողներին և գործով հակառակն անողներին, ժիր արհեստաւորներին՝ թուկից փաթած բնշողագններին, ներսը քահանայ, դուրսը սատանայ ձեռնդրողներին, բեխար և միւրաքաւոր բամբաստաբերներին, սուտ և դրող կտոր ընկած վաճառականներին, ամիսը հինգ թուամսով ծառայող և հինգ տարուայ ընթացքում հարստացողներին, իրանց աչքի գերանը թողած ուրիշի աչքի շիւղը տեսողներին, մեծ մեծ խօսողներին և քիչ գործ անողներին, կտորը երկարացնող և կարճացնող գերձակներին:

*) Ցաւում ենք որ Նոր-Ցաւում համարում չկարողացանք տեղաւորել մեր աշխատանքի այս յօդուածը: Եթէ անցել է Նոր-տարին, սակայն յօդուածը թարմութիւնն ու այժմեայութիւնը չի անցել. երբ նա ապուրի ու կարգացաւ, նա թարմ կ'անայ ընդ միշտ իւր սարկազմով և ապաւորութեամբ:

և ամենայն չափու հասակի՝ հաւատացեալ ի հօրն և ամենախաղաղ սկի: Բժիշկներին. — Կատարեալագործուած ահարաւներ՝ հիւանդներին էս աշխարհից էն աշխարհը փոխադրելու համար:

Հայոց առաջնորդարաններին. — Մովսէս Խորենացու «ողբի» այն մասը, որ վերաբերում է առաջնորդներին և ժողովրդի ղեկավարներին:

Բէլլիսին. — չկայ չարիք առանց բարիքի: «Եկոնոմի» կողպարիչներին. — Լայն կողպար և առողջ ստամոքս կողպատուած իրերը կ'անելու: Վ. մարտելու համար:

Բալթանեան պետութիւններին. — Փոքր գետից մեծ ձկներ չեն կարող դուրս գալ:

Տաճկաստանին. — Փթած ծառը սրբան էլ ջրես չի կենդանանալ:

Բոլղարիային. — Աւագ փառացս անցաւորի ձիշտ որ ուրիշին հոր փորողը ինքը մէջը կ'ընկնի:

Յունաստանին. — Գորդի և եզան առակը Պուրիշկէին. — Մի աւգան միւսին:

Թաւրիզի հայ վաճառականներին. — Ջհուգներ՝ ձեռքերին թակել:

Ռուսաց պատանձին. — Յաջողութիւն, թէ և անունը չէ համապատասխանում իրականութեան — հողը պարսկի, վաճառողը՝ պարսկի, ձեռնարկողը՝ հայ, գրասենեակները և մագաղիները հայի և թուրքի:

Թաւրիզի հայ նորածիլ երիտասարդութեան. — Մի չապօ, մի ձեռնափայտ, մի փայլուն փողպատ, պապիրոս, բայց մկներով լիքը գրպաններ:

Թաւրիզի հիւրանոցներին. — Լիքը գրպաններով երիտասարդներ:

Հայ օրիւրդներին. — Փոքրիկ էլիքարական վառարաններ և մօզնի ժուռնալներ և օրական 6 ժամ վարժութիւններ հայելու առաջ՝ պրիշուկի և կօրէստակապու համար:

Թաւրիզի Ջուլֆա երկաթուղու վարչութեան. — Եւսանդի հոբեր, ազատելու մեզ կառավարների և աւտոմոբիլների կեղծքու մներից:

Պարսից մաքսատան. — Բուլթ դանակներ՝ վաճառականներին աւելի տանջանքով բերթելու համար:

Ամուսնանալ ցանկացողներին. — «Եկեմք» ի համար՝ վերնագրով մի գիրք՝ իրանց անունները ալտեղ տնորոգրելու համար:

Սպորդ-կլուբին. — Ընունը կայ՝ ամանումը չկայ:

Ձանազան ֆիրմաների ներկայացուցիչներին. — Ռուսագէտան ճառագայթներ՝ ծառայողների ներսը քննելու և ըստ այնմ նրանց գնահատելու:

Գինեվաճառներին. — Օղի ու գինի Անպակաս լինի. Եւ ով որ ուզի Թող բուլ-բուլ խմի. Մեզ ինչ փողթ որ Նա ջրախառն է. Միայն սե փողով Կրպաններս լցնի:

Թաւրիզի քաղաքային վարչութեան. — Ուսկաններ՝ փողոցներում մարդ ձուկ որսալու համար:

Աշակերտութեան. — Ոսկի երազների իրագործումն ապագայում:

Թեմական ժողովին. — Արուեստ ներկաւորութեան արդարն՝ անարդար:

Իրաւն՝ անընթաց, սեւը՝ սպիտակ, յանցապարտը՝ ձեռն պէս մաքուր ներկայացնելու և կամ ընդհակառակը ներկելու համար:

Թեմ. 3-անգամ (8-անգամ պիտի լինի) խորհրդին. — Ո՛ւր ես Աղամ...

«Միտք»-ի խմբագրին. — Բոլոր գրածներիդ համակարծինք ենք և հաւանքով որովհետև «մեզանից» չես, քեզ տանել ու համակրել չենք կարողանում. ըստ թուրքերէն ասացումի՝ «Գաղչի աղամսան, հէքի արմանի սան»:

Պաշակցութեան. — Ալէքսանդր Մակեդոնացու դամբանականը այսպէս էր.

«Իրէկի հօր, պերճ, փառաւոր Այսոր մոխիր անարգաւոր»:

Պաշակցական գործիչներին. — Ռոտեղ հաց, հայտեղ կաց:

Տ. Առաքելեանին. — 2արամիտ լեզուագարներին՝ վատարանութիւնը թող չսասանեն քեզ:

Եւջմիածնի միաբանութեան. — Թաղումն իրերատեղութեան և մի փոքր էլ քրիստոնէական հոգի և գործ:

Կաթնաղիկոսին. — Զի կայ ընդ Միածնաէջ սրբավայրդ և ընդ անմիաբան միաբանոց:

Կորապետ եպս. ին. Ատրպատականից յետոյ երկրորդ՝ աքսոր Շամախում:

Հնչ. Կուսակցութեան. — Միշտ կաց այդպէս անկաշառ և անաղմուկ:

Պիէա-Լօտիին. — Խիղճը բազայում չեն ծախում:

Օլգենինին. — «Անհետացող Հայաստան» օրհնութիւնները:

Գորդեան հանդոց «Հայկական հարցին». — Մի նոր և խիզախ Ալէքսանդր Մակեդոնացի:

Արամեան դպրոցին. — Մեր մշտավեր հարուստներից մի երեւաւ ազգաշահիկ չէնք:

Ս. Խան Եղիազարեանին. — Եւս մի ապատկուշացած զղջումն արտադատողներին:

Մեր աղքատներին. — որ համբերեցէ... Թեմականին. — Զինչ պատճառ մեծամարգի քո:

Հայի հոգին ազատ չլինող միասնեալութեանց. — կարգալէք Պօղոս տոռքեալի թուղթ սո Պաղատապիս Ա. գլ. 6-9 համար:

Սպանդարեանը Պաշակցութեան. — Ո՛նց իս ի ծում. լաւ կերտը... Բեզմաղ մի ընդիր, գէթողգա.

դու իս միջավուրդ: Մի բիրանք մինձ մինձ բացի՝ էնէնց մօշուկօնին վերջը:

Եւջմիածնին. — Մի այնպիսի մեքենայ, որ անպէտք միաբաններին փոխ այնտեղից և որժանեալորերին բերի:

Էկոնոմին. — Սուր մկրտաներ՝ դիվիդենդները տարեցտարի խուզելու համար:

Ֆրանսուներին. — По платью востребуютъ, по уму проважуютъ:

Հարիզան թերթին. — Լայն հարիզան և շատ բառեր-առանց բովանդակութեան:

Փարոս ապարանին. — Դալի քնշիչների բանաստեղծութիւններ:

Հայոց եկեղեցիին. — Մի ուժեղ մագնիս մարդկանց ներս քաշելու համար:

Աղքատախնամ ընկերութեան. — Մի նոր աղքատախնամ ընկերութիւն՝ այդ ընկերութեան անդամներին օգնելու և խնամելու և վարչ. նիստերի բերելու համար:

